Կարգապահական գործ թիվ ԿԳ-26153

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Արմեն Այդինյանի **(այսուհետ նաև՝ Դիմող)**և փաստաբան Միքայել Գրիգորյանի,

քննության առնելով փաստաբան Միքայել Մարատի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 3672) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմեն Այդինյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ փաստաբան Միքայել Գրիգորյանը, դեռևս 25.07.2025թ. իրենից վերցրել է 200.000 ՀՀ դրամ գումար և կազմել է լիազորագիր՝ փաստաբանական ծառայություններ մատուցելու համար: Լիազորագրով ներառված է եղել Փաստաբանի կողմից Դիմողին դատական բոլոր ատյաններում ներկայացնելը:

16.10.2025թ. Փաստաբանը զանգել է Դիմողին և հայտնել, որ Իջևան քաղաքի նոտարներից մեկի հետ պայմանավորվել է, որ նոտարական կարգով կատարեն իրենց գործողությունը, սակայն նոտարն իրենց չի ընդունել, քանի որ, ինչպես պարզվել է՝ Փաստաբանը պայմանավորվածություն չի ունեցել նոտարի հետ:

Նշել է նաև, որ Երևան վերադարձի ճանապարհին Փաստաբանից խնդրել է վերադարձնել գումարը և փաստաթղթերը, սակայն վերջինը վերադարձրել է միայն փաստաթղթերը, իսկ գումարի մասով նշել է, որ այդպես չեն պայմանավորվել: Ավելին, Փաստաբանն իրեն ասել է, որ եթե 270.000 ՀՀ դրամ էլ ավելացնի՝ կդիմի դատարան, ինչից

Դիմողը հրաժարվել է:

Դիմողը նշել է, որ մինչ օրս Միքայել Գրիգորյանը չի վերադարձնում իր գումարը:

Դիմումին կցվել է լիազորագիր՝ տրված 25.07.2025թ., տեղեկատվության պահանջ Իծաքար համայնքի վարչական ղեկավարից, ինչպես նաև հաղորդագրությունների լուսապատճեններ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 27.03.2026 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն վերջինս որևէ բացատրություն կամ ապացույց չի ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Միքայել Գրիգորյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Արմեն Այդինյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը նշել է, որ 2025թ. հուլիսին Դիմողի հետ համաձայնության է եկել իրավաբանական օգնություն տրամադրելու շուրջ՝ քննարկելով և համաձայնեցնելով կատարվելիք գործողությունները, ծառայության մատուցման գինը և դրանից բխող՝ նշանակություն ունեցող փաստերը:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողի խնդիրը վերաբերել է Տավուշի մարզի Իծաքար գյուղում գտնվող հողամասին, որի սեփականության իրավունքը պատկանել է Դիմողի հորական ծնողներին: Ցանկացել է փաստացի տիրապետման հիմքով ընդունել ժառանգությունը: Դիմողին բացատրվել է, որ նա առաջին հերթի ժառանգ չի հանդիսանում և չի կարող ընդունել ժառանգություն: Դիմողը հրաժարվել է դա կատարել հոր անվամբ, քանի որ հայրն ունեցել է հարկադիրներ, ինչի պատճառով գույքի նկատմամբ կարող էր կիրառվել արգելանք: Դիմողը, սակայն, ցանկացել է ծանոթ նոտարի միջոցով հարցը լուծել, և նշել է, որ Տավուշի երեք նոտարներից մեկը «իր հետ չունի», ցանկացել է գնալ Իջևան քաղաքի նոտարներից մեկի մոտ:

Փաստաբանը նշել է, որ մինչ այդ պայմանավորվել են 200.000 ՀՀ դրամ՝ նոտարական գործարքի համար՝ պայմանով, որ Իջևան գնալու ծախսերն իրականացնելու է Դիմողը: Պայմանավորվել են նաև, որ դատական կարգով հայցադիմում ներկայացնելու համար կպահանջվի ևս 270.000 ՀՀ դրամ, որից 20.000 ՀՀ դրամը պետական տուրքի գումար:

Սեպտեմբեր ամսին մեկ անգամ փորձել են գնալ նոտարի մոտ և ճանապարհից հետ են գնացել, քանի որ իմացել են, որ համապատասխան նոտարը տեղում չի լինելու: Ի վերջո՝ 2025թ. հոկտեմբերին գնացել են Իջևան, ճանապարհին քննարկել են նաև նոտարական կարգով խնդրի չլուծման հետևանքները, դատական կարգով արդյունքի հասնելու հարցը՝ ապացույց ունենալով Իծաքար համայնքի ղեկավարի կողմից տրված:

Մոտ մեկ ժամ անց Դիմողը հայտնել է, որ չի ուզում, որ Փաստաբանն իր գործն անի և հարցրել է, թե ի՞նչ պետք է անեն գումարային հարցերը, իսկ ինքը նշել է, որ այդպիսի հարց

չկա, քանի որ ի սկզբանե բացառված է եղել գումարի վերադարձը, իսկ 200.000 ՀՀ դրամը նախատեսված է եղել նոտարական գործողությունների հետ: Դիմողն էլ ասել է. «Լավ, պայմանավորվեցինք», և պահանջել է փաստաթղթերը: Համարելով, որ բոլոր հարցերի շուրջ եկել են պայմանավորվածության՝ Փաստաբանը վերադարձրել է Դիմողի փաստաթղթերը և Աբովյան քաղաքում բաժանվել են միմյանցից:

Փաստաբանը հայտնել է նաև, որ մոտ մեկ ամիս անց իրեն զանգահարել է իր և Դիմողի ընդհանուր ծանոթը և հայտնել, որ Արմենը հետ է ուզում իր գումարը, որից հետո Փաստաբանը բացատրել է, որ արդեն համաձայնության են եկել և այդ թեման փակված է:

Այնուհետև, 2025թ. դեկտեմբերի 23-ից 2026թ. հունվարի 29-ը ներառյալ Դիմողը Փաստաբանին և ընտանիքին սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններով լի հաղորդագրություններ է ուղարկել, որոնց Փաստաբանը չի պատասխանել և նույնիսկ իրավական ընթացք չի տվել դրանց:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 27.03.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն վերջինս որևէ բացատրություն կամ ապացույց չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 09.03.2026թ. թիվ 260-Ա/ԿԳ-26153 որոշմամբ Միքայել Գրիգորյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1 ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.1.3, 3.1.4 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

12.03.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Շուշան Հարությունյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 12.05.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 01.07.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 25.07.2025թ. Փաստաբան Միքայել Գրիգորյանը ստանձնել է Արմեն Այդինյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, 25.07.2025թ. լիազորագրի և 29.07.2025թ. գրության պատճեներով:*

2. Դիմողը Փաստաբանին վճարել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

3. Փաստաբանն ընդունել է, որ Դիմողի կողմից վճարված 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը եղել է բացառապես արտադատական փուլի համար: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրություններով:*

4. Փաստաբան Միքայել Գրիգորյանի և Արմեն Այդինյանի միջև չի կնքվել իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբան բացատրություններով, ինչպես նաև առկա չէ այս փաստը հերքող որևէ ապացույց:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Միքայել Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2024 թվականից և 2024-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Միքայել Գրիգորյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի խախտման համար: Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ Միքայել Գրիգորյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.1.4 և 3.8.4 (1) մասով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ,

փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Ընդ որում, հատուցելի փաստաբանական ծառայությունների համար գրավոր պայմանագրի առկայության պահանջ Կանոնագրքով սահմանելը նշանակում է, որ փաստաբանի և վստահորդի հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունն ունի ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև՝ մասնագիտական-էթիկական նշանակություն, քանի որ գրավոր պայմանագրի առկայությունն է թույլ տալիս վիճելի դեպքերում պարզել կողմերի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ծավալն ու բովանդակությունը, ըստ այդմ նաև՝ պարզել կոնկրետ իրավիճակում փաստաբանի կողմից վարքագծային-էթիկական պահանջների կատարումը:

Հանձնաժողովն ընդգծում է, որ Կանոնագրքի 3.1.3 ենթակետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Ավելին՝ Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 ենթակետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքումը կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավապայմանագրային հիմքի, ապա փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց: Այլ խոսքով՝ փաստաբան-վստահորդ հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունը փաստաբանի վարքագծային-էթիկական պարտականությունն է:

Սույն գործով հաստատվել է, որ 25.07.2025թ. Փաստաբան Միքայել Գրիգորյանը վճարովի հիմունքներով ստանձնել է Արմեն Այդինյանին իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը, որի դիմաց Դիմողը Փաստաբանին վճարել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Կողմերի միջև իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր չի կնքվել:

Հանձնաժողովը կարևոր է համարում այն հանգամանքը, որ հենց Փաստաբանի բացատրությունից հետևում է, որ հանձնարարությունն ստանձնելու պահին կողմերի միջև որոշակիացված են եղել ինչպես մատուցվելիք իրավական օգնության բնույթն ու ծավալը, այնպես էլ դրա դիմաց վճարվող հոնորարի չափը: Մասնավորապես, Փաստաբանը հայտնել է, որ 200.000 ՀՀ դրամ հոնորարը նախատեսված է եղել արտադատական՝ նոտարական կարգով համապատասխան իրավական գործողություններ իրականացնելու համար, մինչդեռ հնարավոր դատական վարույթի դեպքում հայցադիմում ներկայացնելու

ծառայությունը դիտարկվել է որպես առանձին հանձնարարություն, որի համար կողմերը քննարկել են լրացուցիչ 270.000 ՀՀ դրամ վճարելու հարցը: Հետևաբար, Փաստաբանի բացատրությամբ արտադատական փուլի շրջանակներում ստանձնված հանձնարարությունը սկզբից ևեթ առանձնացված և որոշակիացված է եղել հնարավոր դատական փուլից: Գործի նյութերից չի հետևում, որ հանձնարարությունն ստանձնելու պահին առկա են եղել այնպիսի չպարզված հանգամանքներ կամ ծառայության ծավալի վերաբերյալ այնպիսի անորոշություն, որոնք կարող էին օբյեկտիվորեն պայմանավորել իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագրի կնքման հետաձգումը:

Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետով նախատեսված երկամսյա ժամկետը գրավոր պայմանագիր կնքելու ընդհանուր ժամկետ չէ, այլ կիրառելի է այն դեպքում, երբ գործի որոշ հանգամանքների կամ ծառայության ծավալի ճշտման իրական անհրաժեշտություն է առկա: Սույն գործով նման անհրաժեշտություն չի հաստատվել: Հակառակը՝ Փաստաբանի ներկայացրած բացատրությունները վկայում են, որ հանձնարարության առարկան և դրա դիմաց նախատեսված հոնորարը կողմերի միջև ի սկզբանե համաձայնեցված են եղել:

Հետևաբար, Փաստաբանը պարտավոր էր իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիրը կնքել հանձնարարությունն ստանձնելիս, իսկ նույնիսկ Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետով նախատեսված բացառիկ երկամսյա ժամկետը կիրառելի համարելու դեպքում՝ գրավոր պայմանագիրը պետք է կնքվեր ոչ ուշ, քան հանձնարարությունը փաստացի ստանձնելուց երկու ամսվա ընթացքում: Մինչդեռ այն չի կնքվել նաև այդ ժամկետում, և իրավական օգնությունը փաստացի մատուցվել է առանց գրավոր պայմանագրի:

Վերոգրյալ եզրահանգումը համահունչ է նաև Փաստաբանի՝ կարգապահական գործի քննության ընթացքում ներկայացրած դիրքորոշմանը, քանի որ վերջինս իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր չկնքելը գնահատել է որպես իր կողմից թույլ տրված թերացում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Միքայել Գրիգորյանը խախտել է Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի պահանջը, քանի որ վճարովի հիմունքներով ստանձնելով Դիմողին իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը՝ սահմանված ժամկետում չի կնքել իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր և ծառայությունները փաստացի մատուցել է առանց այդպիսի պայմանագրի:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, որ Պատվիրատուի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելու վերաբերյալ ձեռնարկվել են միջոցներ, սակայն հնարավոր չի եղել պայմանագիր կնքել Պատվիրատուի վարքագծի պատճառով՝ նախ հարկ է արձանագրել, որ նշված հանգամանքը չունի որևէ նշանակություն վերը նշված իրավական վերլուծությունների հաշվառմամբ:

Այսպիսով, փաստաբան Միքայել Գրիգորյանը վարքագծում Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջի խախտումը, ըստ այդմ նաև՝ իրավական ու փաստական միևնույն հիմքերով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտումը Հանձնաժողովը համարում է հաստատված:

7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.1.4 և 3.8.4 (1) խախտման մասով.

Օրենքի 39.7.-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է կարգապահական հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ կարգապահական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով (...):

Պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետի համաձայն՝ *խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով (...):*

Հանձնաժողովի նիստին ներկա գտնված վեց անդամները հեռացել են խորհրդակացական սենյակ որոշում կայացնելու: Խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով, որպիսի պայմաններում քվեարկության արդյունքում սույն կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Փաստաբանը 2024-2026թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանին նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում

Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետով Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Միքայել Մարատի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 3672) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Միքայել Մարատի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 3672) նկատմամբ հարուցված թիվ 26153 կարգապահական վարույթը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.1.4 և 3.8.4 (1) պահանջների խախտման հատկանիշների մասով կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26153-2-Ա
01 հուլիսի 2026թ.
ք.Երևան